

Թարգմանութեան մէջ: Ասորի եկեղեցին արդէն Բ-Գ դարերէն սկսած՝ մուծեր էր սրբազան քերթութիւնը իր եկեղեցական պաշտամանց մէջ, աւելի դրաւիչ, աւելի ազդեցիկ ու ախորժելի ընելու համար ժողովրդեան կրօնական պաշտամունքը չափուած տողերով ու երաժշտական եղանակներով: Այդ դրութեան առաջին դործադրողն եղած է Բարդէսեան ասորին, որ երգեր ու տաղեր յօրինեց ժողովրդական եղանակներու վրայ յարմարեցնելով, որ ընդմիջով քողարկեց իր աղանդին թոյնը: Ս. Եփրեմ ալ անոր դէմ մաքառելու եւ ժողովրդեան սրտին մէջ խորապէս դրոշմելու համար քրիստոնէական ուղիւ վարդապետութիւնը, այդ դրութեան հետեւեցաւ: Միեւնոյն ժամանակ կուտեցաւ ու ջախջախեց Բարդէսեանի, անոր Արմոնիոս որդւոյն եւ ընդհանուր Գնոստիկեանց մոլորութիւնները եւ ծաւալեց ճշմարիտ վարդապետութիւնը, որուն մէջ ամենամեծ յաջողութիւն ձեռք բերաւ: Առ հասարակ բոլոր ասորի եկեղեցական մատենագիրները, եւ գլխաւորապէս Յակոբ Սարուզեցին (մեր մէջ Սրնեցի կոչուած), իրեն հետեւեցան, առանց հասնելու սակայն ո՛չ անոր իմաստներուն բարձրութեան, եւ ոչ ալ անոր քերթողական արուեստին:

Ասորի սրբազան քերթողութեան գլխաւոր տարրը կը կազմէին Տաղեր եւ Օրհնութիւններ կոչուածները, որոնք մեր շարահաններուն կը համապատասխանեն, եւ ժողովուրդը կ'երգէր զանոնք խմբովին ժամերգութեանց եւ եկեղեցական հանդէսներու պահուն, տէրունական տօներուն եւ մարտիրոսաց յիշատակին օրերը: Եղեսիա քաղաքին բնակիչները, եւ մանաւանդ երիտասարդները, չափազանցօրէն զուարթ եւ զրօսասէր, երգերու խանդով ու նուրբ

ճաշակով օժտուած, յաճախ պարերով ու հանդէսներով կ'անցընէին իրենց տօնական օրերը: Ս. Եփրեմ զանոնք ուղղելու եւ ըզդաստացնելու, եւ անոնց երաժշտական հակումն ու ճաշակը դէպ ի բարին եւ օղտակարը դարձնելու նպատակով, օրիորդներու եւ միանձնուհիներու կրկին խումբեր հիմնեց, սորվեցնելով անոնց եկեղեցական ու կրօնական տաղեր ու մեղեդիներ, զորորը զգացումներով եւ հոգեւոր մտածումներով հիւսուած, որ կ'երգուէին անոնցմէ սուրբ տօներուն առթիւ: Այդ օրերը եկեղեցին կը հաւաքուէին օրիորդներն ու միանձնուհիները, երկու խումբի բաժնուած՝ փոխ ի փոխ երգելու եւ աղօթելու, եւ ինքը՝ իրը հայր մը՝ անոնց միջեւ կեցած, կ'ընկերանար ու կ'ուղղէր զանոնք իր տաւիլով: Ալ երեւակայելու է ժողովրդեան կրօնական խանդն ու եռանդը, դմայլումը, լսելով այն հրեշտակային նուագները, որոնցմով միտքերը երկինք կը յափշտակուէին եւ սիրտերը կը վառէին աստուածային սիրով: Յաճախ Ս. Եփրեմ կը յօրինէր իր տաղերը ասորի տառերուն կարգով ու սկզբնաւորութեամբ, ինչպէս են Աստուածաշունչին զանազան սրբազան քերթուածները, եւ շատ անգամներ անոնց գլխատառերը իր անունը կը կազմէին, որուն հետեւած են մեր քանի մը Հայրերը, ինչպէս Կոմիտաս Կաթողիկոսը՝ իր հոյակապ «Անձինք նուիրեալք» շարականով, Ս. Գրիգոր Նարեկացին՝ որուն Աղօթքներուն մեծամասնութիւնը տաղաչափուած ողբերգութիւններ են, եւ մանաւանդ մեր հոգեբուխ աննման ու պաշտելի Ծնորհալին, որ նրա գերգազական ու քերթողական արուեստին մէջ առաջին տեղը կը դրաւ:

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

(Շարունակելի)

«ԾՈՎՔ»Ը ԵՒ ԾՈՎ-ԴՆԵԱԿԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Երեք հարիւր երկար տարիներու իշխանական եւ թաղաւորական կեանք ապրող Կիլիկեան աշխարհը, կարծես խորթ դաւալի մը պատրանքը ձգած է բովանդակ հայութեան վրայ, որ անոր անցեալի դո՛ւստութեան մշտնջէ մէջ պարուրած է եւ մոլորութիւնը մշտնջէ մէջ պարուրած է եւ մոլորութեան տալու աստիճան հետաքրքիր աչքերէ ալ հեռու պահած դայն: Պատմութեամբ եւ բանասիրութեամբ զբաղող մեր հին ու նոր սերունդը աչքերնին Կիլիկիան մշակոյթը կը փնտռեն վերին Հայաստանի մշակոյթը կը փնտռեն վերին Հայաստանի սահմաններուն մէջ, եւ կը զլանան հարեւանցի ակնարկ մ'իսկ Կիլիկիոյ վրայ: Որպէս թէ Կիլիկիա ունեցած չլլար հայութեան համար այնքան պատուաբեր պատմութիւն մը. ունեցած չլլար վանքեր, դղերակներ ու բերդեր, ճոխ ու չէն, որքան ունեցած է Արեւելեան Հայաստանը:

Այս անբաղձալի դոյաւիճակին պատասխանատուութիւնը պէտք է փնտռել Կիլիկեան հայութեան մէջ, որ չէ կրցած իր շրջապատը ճանչնալ, չէ սերտած իր բնիկ երկրին պատմութիւնը ու սրբավայրերը, չէ հետաքրքրուած անով եւ հետեւաբար չէ կրցած ցոյց տալ աշխարհին թէ Կիլիկիան եւս հայկական եղած է, Կիլիկիան եւս հայկական դոյն ու նկարագիր ունի:

Միշտ մեր խօսքը 19րդ դարու վերածնունդի մասին ըլլալով, այդ ժամանակաշրջանին Կիլիկիա չէ տուած Խրիմեան մը, որ կարողանար չէնցնել Կիլիկեան նշանաւոր վանքերէն մին, չէ ունեցած Սրբանձաւ տեանց մը, որ Կիլիկիոյ մէջ հետախուզական պոյսոյ մը կատարելով տար տեղական ծանօթութիւններ, հաւաքէր ժո-

ղովրդային բանահիւսութիւնները եւ բանաստեղծական թռիչքով մը նկարագրէր Կիլիկիոյ լեռներն ու դաշտերը, գետերն ու լիճերը, վանքերն ու բերդերը: Ի՞նչպէս կարելի է երեւակայել թէ վկայասէրի ու Բարսեղի պէս իշխանական տոհմէ գլխաւոր կան ու աղղեցիկ կաթողիկոսներ, զան եւ բնակին Կիլիկեան վանքերու մէջ եւ այդ վանքերը չլլային ճարտարապետական կառոյցով նշանակելի հաստատութիւններ: Փիլարտոսի եւ Գող վասիլի պէս խիզախ, մեծահարուստ իշխաններու յաջորդն եւ մեծահարուստ իշխաններու զոյգ մը կաթողիկոսներ, անբարեկամ զոյգ մը կաթողիկոսներ, անպայման որ նիւթական լայն չափերով օղտուած կրնային ըլլալ անոնցմէ, եւ կառուցած հոյակապ վանքեր ու կաթողիկոսանոցներ իրենց գիրքին ու իշխանական կեցուածքին վայել: Բայց Թորամանեան մը չէ զտնուած որ պեղումներով կեանք տար այդ փլատակներուն ճարտարապետական կառուցուածքին, որոնք թերեւս նոր յայտնութիւններ մէջտեղ բերէին հայկական հանճարին ստեղծագործման:

Բայց պէտք է միշտ այդ հաւատքը ունենալ թէ պիտի գայ օր մը որ մենք հիացմունքով պիտի դիտենք անառիկ Լամբրոնի բերդը, լայնանիստ հսկայ Պապիւռնը, խորհրդաւոր Անապարան իր սքանչելի Զորաւորաց եկեղեցիով, Ծոզականի սիրուն ու դոհար բերդը, անմատչելի Ճանճի բերդը, Դրապարիկ, Ծուղուրի, Այդեկի, Արեւնիի ու Մեծքարի վանքերը, որոնք թէեւ աւերակ, բայց խօսուն վկաններն են անցեալի ճոխութեան:

Կիլիկեան իշխաններն ու իրենց բերդերը, վանքերը ու անոնց ժրաջան միաբանները անջնջելի հետքեր թողած են պատմութեան էջերուն վրայ, որոնք քիչ ծա-

նօթագրում են հայ հասարակության, այլ սակայն արժանի էին առերևույթ լայն տեղ զբաղեցնելու:

Այս բոլոր մոտացություններու առնթեր, Կիրիկիա ունի նաև տեղադրական անհատականությունը զգալիորեն բացահայտելու (*): Բացի յայտնի քանի մը բերդերէ, որոնք իրենց հին անուններով կը կոչուին մինչև հիմա, անձանթ կը մնան շատ մը բերդեր ու վանքերու տեղն ու դիրքը:

Կիրիկեան աշխարհին ճարտարապետական ճոխութիւններու, պեղումներու միջոցաւ վերականգնման կարելիութիւնները միշտ մեր աչքին առջեւ ունենալով հանդերձ, կ'ուզէինք տեղադրական ճշգրտներ ընել ի մասին վանքերու ու բերդերու, որոնք Լանկլուայէն սկսեալ գրեթէ բոլոր եւրոպացի հնախոյններու կողմէ սխալմանքներու ենթարկուած են եւ մեր անդուգական Արիւնը անգամ, իր հոյակապ Սիսուանին մէջ, յաճախ անոնց հետեւելով անորոշութիւններու մէջ մնացած է:

Կը սկսինք ուրեմն անուանի գեղակէ մը, որ թէեւ Կիրիկիայէն դուրս, բայց Կիրիկիոյ հետ սերտ կապակցութիւն ունեցած է սահմանամերձ ըլլալուն, եւ նա մանաւանդ Գրիգոր Պահլաւունի եւ Ներսէս Շնորհալի կաթողիկոսներու պէս լուսաչող գէմքերու ալ ծննդավայրը եղած Ծով - գեղակի «Ծովք» տեղադրութիւնը ընել: Այս գեղակի մասին Չամիչեան, Սրուանձտեանց, Արիւն, Խօսած են բայց տեղւոյն մասին վերջնական ճշգրտութեամբ մը չեն յանդամ: Միայն 1904-ին Բարդէն Վարդապետ (Աթոռակից) Կիւլէսէրեանի հրատարակած Ծովք գրքովը ընդունուած է իրր վերջնական տեղադրութիւն այդ գեղակի մասին:

(*) Դեռ վերջերս «Սիոն» ամսագրի փետր. թիւին մէջ, Անաւարդայի մասին գրող «Եայտնի» հայ պատմագէտ մը, տեղադրական խոշոր սխալներ կ'ընէ Սիսու, Միսիսու, Թէլ Համաունը երբ Խառնելով:

սին եւ ըստ այնմ ալ անցած պատմութեան: Բարդէն Վարդապետ այդ գրքով «Ծովք»-ին Այնթապի մօտ գտնուած «Սօֆ»-ը ըլլալը չեղած է եւ «Սօֆ»-ին ու «Ծովք»-ին հնչումներուն մէջ սերտ առնչութիւն մը գտնելով, հիմնաւորած է իր պաշտպանելու դամքը:

Մենք պատմական եւ բնութեան պարզած տուեալներուն վրայ հիմնուած՝ պիտի տանք նկարագրականը Ծովքին եւ Ծով - գեղակին, որոնք ոչ թէ Այնթապի «Սօֆ»-ը այլ Մարաշի մօտ գտնուած երեք ընդարձակ լիճերն են ծովք-ը. իսկ լիճերուն արեւմտեան ափերուն մօտը գտնուած փոքրիկ բերդն ալ՝ ծով-գեղակը:

ԾՈՎՔԻ ԵՒ ԾՈՎ-ԴԵՂԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆՆԵՐ

Պատմութեան մէջ Ծովքի եւ Ծով-գեղակի անուններուն յիշատակութեան առաջին անգամ կը հանդիպինք երբ Մաղխտորոս Պահլաւունին իր չորրորդ աղջիկը կնուծեալ կու տայ Ծովքի իշխանին: Այս իշխանին անունը յայտնի է, միմիայն «Ծովքի իշխան» անունով յիշուած է. բայց անոր հաւանականութեամբ Պահլաւունի պէտք է եղած ըլլայ, քանի որ Շնորհալին ակնարկելով իր մեծ հօրը մասին կ'ըսէ. «Պահլաւունին ազգաւ սերեալ»:

Մաղխտորոս, որ միջագետքի եւ Վասպուրականի վրայ կ'իշխէր բիւզանդական կայսրերու հովանաւորութեան տակ, եւ իր իշխանութիւնը կը տարածէր մինչև Եփրատի արեւմտեան սահմանները, կ'երեւի իրեն թեւաբերութեան տակ առած ըլլայ փեսան, եւ չնորհած անոր Ծով-գեղակը իր նեղ շրջանին մէջ. քանի որ Գող Վասիլ եւ Փիլարտոս ընդարձակ տարածութեամբ հողեր ու բերդեր գրաւած էին նախապէս այդ կողմերուն վրայ:

Ծովքի տէրը, Մաղխտորոսի փեսան, կ'ունենայ չորս մանչ դաւակներ՝ Ապիրատ,

Վահրամ, Վասակ եւ Գրիգոր: Ապիրատ կը յաջորդէ իր հօրը եւ տէր կը դառնայ Ծովքի. իսկ իր երկու եղբայրները Վահրամ եւ Վասակ ղինուորական «Վահագոյն» փառս ընկալեալ, զպատերազմ աղանց վանեալ, հակառակաց յաղթող գտեալ: Իսկ կրտսեր եղբայրին Գրիգոր, Վկայասէրի կողմէ կալիսկոպոս կը ձեռնադրուի Եփրատի վրայ:

Ապիրատ Ծովքի իշխանը կ'ունենայ նոյնպէս չորս մանչ դաւակներ՝ Վասիլ, Շա - հան, Գրիգոր եւ Ներսէս:

Ապիրատ իշխան, 1111-ին Ծով գեղակի պաշարման կողմէրուն մէջ Հաղարացի շիրապարման կողմէ նենդարար արձակուած նախնի մը կողմէ նենդարար արձակուած «Երեքթեւեան եռաթունեալ» նետով մը կը մեռնի «Եւ յետ փոքու վերափոխեալ, ի շիրիմ հարցն ամփոփեալ, եւ ընդ վկայսն պսակեալ»: Ապիրատի անդրանիկ որդին Վասիլ հօրը կը յաջորդէ եւ տէր կը դառնայ Ծով-գեղակին:

Ձեզարս ինքեան հարազատեալ յիշատական դահ յառաջեալ Վասիլ անուն վեհ երեւեալ եւ զօրավար համապատուեալ:

Այս Վասիլ իշխանին տղան է որ Շնորհալիի Վախճանութէն յետոյ կաթողիկոս կը ձեռնադրուի Գրիգոր Տղայ անունով 1173-ին: Վասիլին միւս եղբայրն էր Շահան, որուն տղան ալ կաթողիկոս կը ձեռնադրուի Գրիգոր Ապիրատ անունով 1194-ին եւ դուստրը՝ Շահանդուխտ, մայրն է Ներսէս Լամբրոնացի: Ապիրատ իշխանին միւս երկու դաւակները, Գրիգոր եւ Ներսէս, իրենց հօրը վախճանութէն շատ փոքր ըլլալուն՝ Գրիգոր Վկայասէրի կողմէ, որ մեծ հօրը եղբայրն էր, կ'որդեգրուին եւ կրօնաւորի յանձնուին Կարմիր Վանքի վանահայր Ստեփանոս Մանուկ Վարդապետին, որ այն ատեն մեծ հռչակ ունէր իրր գիտնական անձ: Հոս, այդ Կարմիր վանքին մէջ իրենց

ուսումը կատարելէ յետոյ Գրիգոր եւ Ներսէս ապագային կ'ըլլան մեծահռչակ կաթողիկոսներ, առաջինը Գրիգոր Պահլաւունի կաթողիկոս, իսկ երկրորդը Ներսէս Կլայցի, Շնորհալի կաթողիկոս:

Մենք շատ հակիրճ ու սեղմ տողերու մէջ տուինք Ծովքի ու Ծով-գեղակի պատմութիւնը, ուր ապրած են յաջորդաբար երեք սերունդներ եւ տուած են հայ պատմութեան ամէնէն կարկառուն գէմքեր՝ ինչպէս Պահլաւունին եւ Ներսէս Շնորհալին: Եթէ ենթադրաբար ընդունինք որ Մաղխտորոսի փեսան Ծովքի իշխանը, Ծովք հաստատուած էր Մաղխտորոսի վախճանութէն յետոյ գէթ տասը տարի առաջ, ըսել է 1049-ին, եւ կաթողիկոսարանին ալ Ծովքէն 1149-ին, որով Ծովքի մէջ հայ իշխանները եւ Պահլաւունի կաթողիկոսն ալ մէջը ըլլալով, հարիւր տարուան կեանք մը ապրեցան: Թէեւ գեղակը փոքր եւ թշնամի յարձակումներուն համար անպաշտպան, բայց կրկին բաւական ընդարձակ պէտք էր ըլլալ զթաղապետան տալու ձիաւորներու, զինուորներու եւ իշխանական բաղմանդամ ընտանիքին: Նոյնպէս գեղակը անպայման ունեցած պէտք է ըլլայ եկեղեցի մը եւ կամ մատուռ մը, ուր կաթողիկոսը պէտք էր յաճախէր իր կալիսկոպոսներով ու վարդապետներով եւ իր իշխան եղբայրներով: Արդէն Շնորհալին բացայայտ կերպով կ'ըսէ իր հօր Ապիրատի թաղման համար «Ի շիրիմ հարցն ամփոփեալ»: Ըսել է գեղակին մէջ շիրիմներ ալ կային եւ կամ ինչպէս ծանօթ է, իշխանները կը թաղուէին անպայման եկեղեցիներու մէջ: Հոս տեղն է ըսել թէ Բարդէն Վարդապետին մատնանը չած Սօֆը, ինչպէս կը գրէ ինք, «Հաղիւ չած Սօֆը, ինչպէս կը գրէ ինք», «Հաղիւ չած Սօֆը, ինչպէս կը գրէ ինք»: Ուրեմն Սօֆ-ը չէր կրնար այսքան բաղմանդամ ընտանիք պարունակել:

ԾՈՎՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ - ՏԵՂԱԳՐԱ-
ԿԱՆ ԴԻՐՔԸ

Մեք ի դղեկեց որ Ծով կոչի
սր սեփական մեր էր տեղի.
ՇՆՈՐՀԱԼԻ

Բարդէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան իր Ծովք
զբնոյշիւ փաստացիօրէն եւ պատմական
ու աշխարհադրական տուեալներու վրայ
յեցած, որոշապէս կը հերքէ այն բոլոր
թիւր կարծիքները թէ Ծովքը Սարրերդի
մօտ գտնուող Կէօլնիքը եղած ըլլայ: Ու-
րեմն զանց առնելով Կէօլնիքի մասին Չա-
միչեանէ, Սրուանձտեանցէ ու վերջերս ու-
րիշներու կողմէ եւս հետադիմութեամբ նոյն
նպատակ փաստարկութիւնները, մենք
կ'անցնինք քննելու Բարդէն Վարդապետի
այն ենթադրութիւնը թէ Այնթապի մօտ
գտնուող Սօֆը եղած է Ծովքը:


Հ. Ալիշան իր «Շնորհալի եւ պարագայ
իւր» յայտնի դործով որոշապէս կ'ըսէ.
«Ծովքը պէտք է ըլլայ հաւանօրէն Մարա-
շու Այնթապի միջոյ տեղ մը». ահա այս
կէտէն մեկնած, Բարդէն Վրդ. կը քննադատ
Ծովքը եւ Սօֆը նոյնացնել, քանի որ Սօֆը
Այնթապի մօտ կը գտնուի եւ Սօֆը ու
Ծովքը քիչ տարբերութեամբ նոյնահնչիւն
բառեր են:

Մեր հին մատենագիրները լիճը առանց
բացատրութեան ծով կ'անուանէին. Սեւա-
նայ ծով, Աղթամարայ ծով, Արդնի ծով:
Բայց մէկ պայման անհրաժեշտ է լինի
ծով ըսուելուն. այն թէ՛ կայուն, մնա-
յուն ջուրի ընդարձակ աւազան մը գոյու-
թիւն ունենայ: Չմբան անձրեւներէ եւ կամ
զարնան ձիւնհալէ գոյացած պատահական,
անկայուն ջուրի հաւաքոյթիւն եւ կամ «Վր-
րած»ներուն երբեք ծով անունը չէ տըր-
ուած: Եթէ այդպէս պատահած ըլլար,
մենք ըլլա՞յ Եփրատացւոյ երկրին մէջ, ըլ-
լայ ալ հայկական հողերու վրայ հարիւր-
ներով ծով պէտք է ունենայինք: «Ապիրատ
իշխանի Ծով դղեակը Ծովքի մօտ» որո-
շապէս կ'արտայայտէ գոյութիւնը լիճերու

խումբի մը որուն աւրնթեր կը գտնուէր
դղեակը: Մինչ Բարդէն Վրդ. Սօֆի ստո-
րութիւնը, ձմբան հաւաքուած ջուրի ծանծաղ
եւ ամսուան մը կեանք ունեցող ճախճա-
խումբին Ծովք անունը կու տայ, ինչ որ
որոշ խեղաթիւրում մըն է միեւնոյն ատեն
ծիծաղելի Ծովք եւ Ծով-դղեակ փառա -
շուք անուններուն կապակցութեամբ:

Բարդէն Վրդ. կը գրէ. «Տըւք գաւառին
փոքրագոյն դղեակը ըստ ամենայն հաւա-
նականութեան, քովը կամ մօտերը գլու -
նուած լճակի մը անունով կոչուած ըլլայ
Ծով» եւ կը շարունակէ լուսանցքին վրայ
«Եւ իրաւի Սօֆ ունէր հովտի մէջ ոչ-իրա-
կան լճակ մը, զոր հետզհետէ ցամքեցնե-
լով մշակելի հովտի մը վերածած են դիւ-
ղացիք: Այս ծովը (- լճակը) կը գոյանար
Սօֆի լեռներէն, ձիւնհալի ատեն: Բայց
ի՞նչ հարկ կար այսքան արհեստական, ան-
կայուն եւ ոչ-իրական լճակ մը փնտռելու
Սօֆի ստորոտը, մինչ Սօֆէն քիչ վեր կըր-
կին Տըւք գաւառին մէջ կը գտնուէր իրա-
կան երեք լիճերու խումբ մը որ մինչեւ
այսօր ալ կան ու կը մնան եւ Կէօլնիքը
անունով ծանօթ են քարտէսներու վրայ:
Բարդէն վարդապետին սխալմունքը հոն է
որ կ'ուզէ անպայման «խնամութիւն» մը
տեսնել Սօֆի եւ Ծովի միջեւ, նոյնահնչիւն
բառերու խաբկանքին տակ, եւ ահամայ
կ'իյնայ անպայման չինծով վայրի մը վրայ:

Բարդէն Վարդապետ կը գրէ. «Աշխար-
հադրութեան մէջ շատ սովորական երե -
ւոյթ մ'է՛ այս, շատ մը քաղաքներ ու դիւ-
ղեր իրենց դիրքը լաւ շէշտող ունէ պարա-
դային կը պարտին իրենց անունները,
այսպէս Դուին կը նշանակէ բլուր, որով-
հետեւ բլուրի վրայ կամ քովը չինուած է.
Մեծամօր կը նշանակէ մեծ ճահիճ, Տաւ-
րոս կը նշանակէ ցուլ, որովհետեւ շատ
ցուլ կը գտնուի Կիւսանոս եւ Պիոսմոս գե-
տերուն կազմած տեղիքային վրայ» եւն.:
Յիշուած այս ենթադրութիւններու վրայ,
ինք անդալարար սխալմունքի մէջ կ'իյնայ,
քանի որ Սօֆը բլուր մըն է եւ քովերը



«Ծովք»ի երեք լիճերէն մէկը. - Կէօլնիքը լիճը.

բնաւ լիճ չկայ. ուրեմն ինչո՞վ բացատրել
Ծովքը կամ Ծով-դղեակը, ձիւնհալով դո-
յացած եւ քանի մը շարթուան կեանք ու-
նեցող լճացած ճախճախումբ անշուշտ չէր
կրնար տեսական անուն մը տալ Սօֆին,
քանի որ տարիներու կրնանք հանդիպել որ
ձիւն չի դար եւ կամ անձրեւ շատ քիչ կը
տեղայ, որով այդ ծովի երեւոյթը կ'ան-
հետի եւ անունն ալ միասին կ'ոչնչանայ:
Սա երեւոյթն ալ յատկանշական է որ բո-
լոր հեղինակները որոնք Ծով-դղեակի մա-
սին գրած են, երկու բառ կը դործածեն
«Ծովք» եւ «Ծով-դղեակ»: «Ծովք» որ
պէտք է հասկնանք լճերու խումբ մը եւ
ոչ թէ մէկ լիճ: Իսկ «Ծով - դղեակ»ը
այդ լիճերուն մօտ չինուած դղեակ բերդ
մը. Սօֆի վրայ կամ մօտերը ոչ լիճ
կայ եւ ոչ ալ հաւանաբար դղեակի մնա-
ցորդներ: Ըստ Բարդէն Վարդապետի՝
«Ծովք» էջ 24, «Սօֆի վարդապետը հաղի-
մ-6 մեղր տարածութիւն ունի»: Այս նեղ-
լիկ տարածութեան վրայ դղեակ չէր կրնար
շինուիլ եւ ոչ ալ իշխանական ընտանիք մը

կրնար հոն ապրիլ, ուր մնաց կաթողիկո-
սարան եւ իշխանական դահլիճ ունենայ,
իւր եկեղեցիով ու շիրիմներով եւ կամ աս-
պետներով եւ անոնց ձիւնհալներով, որոնք
կրնային դէթ ժամանակուան մը համար
գլխավորաւ թշնամիի յարձակումներուն:

Սօֆի մասին այս հակիրճ բացատրու-
թիւնները տալէ յետոյ կու գանք բուն
խնդրին էութեանը. Ո՞ր կը գտնուի Ծով-
քը եւ Ծով-դղեակը: Սովորաբար ԺԳ. հա-
մար ժէջ անծանօթ հեղինակ մը ահանա-
տորին մէջ անծանօթ հեղինակ մը ահանա-
տեսի հետեւեալ վկայութիւնը կու տայ այս
մասին. «Եւ արդ թէպէտ եւ բնիկ աշխար-
հէն վտարեալ էին սուրբ Հայրապետքն Հա-
յոց, ուր երեցադոյն աթոռն էր ի Շիրա-
կանն անդ, բայց զայնու ժամանակաւ դե-
տեղեալ ունէին զկայանա բնակութեան Տէ-
րն Գրիգորիոս տիեղերալոյս եղբայրն Ներ-
սիսի (Շնորհալի) յերկրին Անտիոքայ ի
գաւառին Տըւք, ի փոքրագոյն դղեակն
Ծով կոչեալ»:

Հ. Ալիշան իր ծանօթ «Շնորհալի եւ պարագայ իւր» գրքին մէջ, էջ 96, կը գրէ.

«Գրիգորիս եւ Ներսէս, որք երբ լսեցին Անոյ նորէն նուաճիլն ի Փատլունէ յամին 1125, եւան եկան իրենց ծննդեան տեղը եւ հայրենի տունը, ի Ծով, զոր հայրերնին Ապիրատ ամրացուցեր էր. իրենք ալ նորէն նորոգելով հոն հաստատեցին քառորդ դարու մ'ալ հայաստանեայց տապանակը: ... Այս տեղս իրենց առջի բնակած տեղէն Սեաւ լեռանց վանքերէն (Շուղուր կամ Կարմիր վանք) շատ հեռու չէր... Հաւանորէն Մարաշու եւ Անթապու միջոց տեղ մ'էր: Վասնիկ հաստատութեամբ կ'ըսուէր որ Անտիոքայ Լատին իշխանութեան սահմանն էր, եւ յատուկ դաւան Տլուք կ'ըսուէր. եւ տաքարին ձոսլին փոսնի իշխանէն խլուած էր. զուցէ ուրիշ Կէօլճիւք լճի մը մօտ (Կեալուր Կէօլճիւք) ուր հնախօս աշխարհագիրք դնեն զՏլուքն աւանն»:

Տլուք, հին ատենները Կոմոկէնի (Comogène) երկրին մաս կը կազմէր ուր կը գտնուէր ձիւփիւթէր Տօլքիւնիւսի մեհեանը: Տլուք դաւառը կը տարածուէր դէպի հիւսիս Տաւրոսեան լեռները, հարաւ մինչեւ Քիլիս ու Սօֆ, արեւելք Թլաշար — Հոռմիլայ, իսկ դէպի արեւմուտք կ'երկարէր մինչեւ արդի Զինճիլի (Samala) ըսուած տեղը, Կեալուր կէօլի մօտ: Ապիրատին, փլլարտոսին ու Գող Վասիլին իշխանութեանը ատեն Տլուքը կը կոչուէր «Երկիրն Ալէքսիս»: Խաչակիրներու դալէն յետոյ սկսաւ յաջորդաբար կոչուիլ Անտիոքի երկիր, ձոսլինի երկիր եւ վերջն ալ Մարաշի իշխան Պոլտինի (Պաղտըն) անունով Պաղտինի երկիր: Մինչեւ հիմա ալ այդ երկրամասը, այսինքն Տլքոյ դաւառը, թուրքերու կողմէ կը կոչուի «Պաղտըն նահիյէ-սի» որուն մէջն է Ծովը եւ Ծով-դղեակը:

Տլքոյ դաւառը նշանաւոր տեղ մը կը դրաւ հին պատմութեան մէջ, բացի իր ծանօթ մեհեանէն: Երկիրը անցը մըն էր իկոնիոյ սուլթաններու եւ արաբ էմիրներու

րու բանակներուն, որոնք կ'ուղէին անցնիլ Եփրատացուց երկիրները: Ռազմական այս բանուկ ճամբուն վրայ կը գտնուէր Ծով-դղեակը: Իկոնիոյ Սուլթան Մասուկը 1149ին Կոկիսոնի վրայէն իջնելով կը գրաւէ Գերմանացուց (Մարաշ) աշխարհը եւ տարաբար Պահլաւունի Կաթողիկոսը տեսնելով վտանգը կը լքէ Ծով-դղեակը եւ կ'անցնի իր եղբոր Շնորհալիի հետ Հոռմիլայ, ահա թէ այս մասին ինչ կը գրէ Շնորհալին.

Մասուկ Սուլթանն Յիկոնացուց եկեալ յաշխարհ Գերմանացուց (Մարաշ) առեալ զաւանս քաղաքացոց մինչ ի կողմանս Եփրատացուց իսկ Հայրապետ հանուրց հայոց Անուն զուարթուն Գրիգորիոս ի Ծով անուն դղեկին եկեալ զոր սեպհական ինքեան շինեալ ի յանտիկ ամրոց հասեալ Հոռմիլական Կլայ յորջորջեալ:

Ըստ Մ. Ուռհայեցիի, այդ թուականին — 1149ին — «Պաղտին որ էր աէր երկուց աշխարհաց Գերմանիկացուց (Մարաշ) եւ Քեսոնի», տեղի կու տայ Մասուկի յորձանքներուն եւ Մասուկ իր ասպատակութիւնը կը տանի մինչեւ Թէլաւետիոյ (Թլաշար) «եւ զամենայն սահմանս նորա սրոյ ճարակ արարեալ զորս եղիտ յաշխարհին»: Մ. Ուռհայեցի էջ 500-501:

Այս պարագան եւս ցոյց կու տայ թէ Մասուկ սուլթան Մարաշը գրաւելէ յետոյ, շարունակելով իր յաղթական դնացքը ուղղակի դէպի Արեւելք կը հասնի Եփրատի եզերքը մինչեւ Թլաշար: Այս դրնացքին մէջ անշուշտ կը հանդիպի Ծով-դղեակին ուր կը բնակէին Գրիգոր Պահլաւունի Կաթողիկոսը իր եղբոր Ներսէս Շնորհալիին հետ. եւ անոնք փախուստ կու տան, ըստ Շնորհալիի

Մեք ի գղեկէն, որ Ծով կոչի որ սեփական մեր էր տեղի... անցեալք ի յայնկոյս Տորոսի բնակեալ հանգէպ ամբականի, որ Ալլասեո քոր անուանի... որդի յաղթողն Լեւոնի, որոյ Թորոս վերածայնի, առ բարեպաշտ մեծ իշխանի, եւ Կոստանդեայ եւ Ռուբէնի:

Շնորհալիին վերի տողերը ցոյց կու տան թէ Ծով-դղեակը չէր կրնար Սօֆը ըլլալ, Սօֆը բաւական հեռու է Տաւրոսէն: Մասուկ սուլթան Մարաշը գրաւելէ յետոյ փէշերը քերելով կ'անցնէր Քեսուն ու յետոյ ալ Թլաշար: Մինչ Ծով-դղեակը Տաւրոսի ճիւղ կողերուն վրայ շինուած ըլլալով, դիւրին էր կաթողիկոսին եւ իր եղբորը «յայնկոյս Տաւրոս անցնիլ եւ մեծ իշխան Թորոսի Ալլասեո քոր աւանին մէջ ասպատան գտնել: Ծովը եւ Ծով-դղեակը, ասպատակ սուլթանին ճամբուն վրայ կը գտնուէր: Սօֆը կը գտնուէր այս ճամբուն հարաւային հողամասին վրայ: Սօֆ բնակող կաթողիկոսին համար աւելի հեշտ էր փախուստ տալ Հոռմիլայ եւ կամ յարմարագոյնը պիտի ըլլար Կարկառ անցնիլ, հոն ուր կաթողիկոսին Վասիլ եղբայրը իր ընտանիքով կը գտնուէր: Բայց այդ չպատահեցաւ, քանի Ծովը Տաւրոսի ստորոտը կը գտնուէր, եւ Թորոսի երկրին սահմաններուն մօտ. ուստի կաթողիկոսին Տաւրոս անցնիլը բնական պիտի ըլլար:

Ծով-Քի Եւ Ծով-Դղեակի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆԸ

Եթէ ընդունինք որ մեր հին մատենադիրները լիճը ծով կ'անուանէին, ուրեմն Ծովը ըսելով պէտք է հասկնանք մէկէ աւելի լիճեր իրարու քով հաւաքուած: Բնաւ չենք հանդիպած որ Ծովը Աղթամարայ եւ կամ Ծովը Սեւանայ ըսուած ըլլայ, այլ միայն ծով Աղթամարայ, ծով Սեւանայ: Խնդրոյ առարկայ Ապիրատ իշխանին Ծով-դղեակի առիթով «Ծովը» յորջորջումին շարունակ կը հանդիպինք. ասով իսկ յայտնի կ'ըլլայ որ լիճերու խումբ մը պէտք է գոյութիւն ունենայ Ծով-դղեակին առընթեր. ինչ որ մենք ունինք արդէն Մարաշի շէշտակի արեւելքը, Տլքոյ դաւառին Պաղ-

տնի երկրին մէջ, Սօֆէն յիսուն հազարամեդր դէպի հիւսիս:

ԾՈՎՔԻ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆԸ

Երեք ընդարձակ լիճերէ կը բաղկանայ «ծով»երու այս խումբը, եւ կը տարածուին Տաւրոսի մի կիրճին մօտերը, իրարմէ շատ քիչ հեռաւորութեան վրայ, թուրքերու միջոցաւ իրարու հետ հաղորդակցելով:

Լիճեր յորդած ջուրը մէկէն միւսը կ'անցնի եւ ամենավերջին արեւմտեան լիճէն դուրս գալով պղտիկ գետակ մը ձեւացուցած կը թափի Ազուս գետին մէջ, ճիւղ Ծով-դղեակի ստորոտին: Լիճերը ակեր ունին իրենց յատակը որոնց պղպշտէն դուրս գայթը որոշապէս տեսանելի է: Ջուրը ըմպելի, պաղ ու զուլալ է: Ջուրն ու գարնան եղանակներուն լճակներու ափին մօտեանը անկարելի է, որովհետեւ շուրջ բոլորը ճախճախուտի կը վերածուի: Իսկ ամբողջ եղանակին թուրքերու վրայ կարելի կը գտնայ պտոյտը: Լիճերը լիքն են ամէն տեսակի ձուկերով, փոքրէն մինչեւ մէկ ու կէս մեդր երկարութեամբ խոշոր ձուկեր առատօրէն կը գտնուին. տեղացիները ձրկնորսութեամբ բնաւ չեն հետաքրքրուիր: Ջաղացական մարաշցի հայերը մերթ ընդ մերթ զբօսանքի եւ հաճոյքի համար ուռկաններով կ'որսան մանաւանդ օձաձուկերը, որոնք երամ-երամ ծեծեծուն փալքով դիւրար կը հալածեն: Այս երեք լիճերը կը կոչուին «Ինէքի», «Աղապը» եւ «Կէօլ-պաշը»: Երեքն երկարութիւնն է 8 — 10 հազարամեդր:

Ծովքի մասին այսքանը ըսելէ յետոյ կու գանք տալ Ծով-դղեակի նկարագրութիւնը: Ծով-դղեակը կը գտնուի լիճերու հետ մէկ դժի վրայ եւ անոնց արեւմուտքը հաղիւ երկու հազարամեդր հեռաւորութեան մը վրայ: Փոքրիկ բերդ մըն է ան, Տաւրոսի ստորոտը ցածիկ ժայռերու վրայ

չինուած, բայց հսկայ քարերով շրջապատուած. մուտքը արեւելքէն է. հիւսիս ու արեւմուտքին ձորակներով անջատուած եւ եւ անտառներով ծածկուած, հարաւէն լիճերու «ծովք»-ի ջուրը միացած Աղսու գետին հետ ոլորապտոյտ կը հոսի բերդին ստորոտը քերելով: Բերդը այժմ փլատակի վերածուած է. միայն արեւելեան մասին վրայ կամարակապ սենեակ մը գեռ կանգուն կը մնայ, որուն լայնքն ու երկայնքը 4-6 մետրի վրայ է: Բերդին հիւսիսային կանգուն պատերէն դատելով, այս մասը, կարծես, ձիաւորներու յատկացուած տեղ մըն է. հոս սենեակները երկար ու նեղ են եւ տեղ տեղ, պատերը խոռոչներ ունին. տեղացի քերտերը Բերդին Ախոռները կը կոչեն մասը: Բերդին արեւելքի ու արեւմուտքի պատերը հաստ ու ամրակուռ են, բաժնուած սենեակներու, որոնց փլատակները խոշոր քարակոյտեր կը ձեւացնեն: Արդէն բերդը այժմ անտառի մը ձեւը առած է վայրի ծառերով ու թուփերով ծածկուած: Թէեւ բերդը «փոքր դղեակ» մըն է, բայց Հ. Ալիշանի ըսածին պէս «Բաւական ամուր էր տեղն այլ ոչ շատ, եւ ոչ ալ ընդարձակ, վասնզի փոքր դղեակ կը կոչուի. այլ այն ատեն իրենց համար յարմար եւ չափաւոր երեւցաւ, իսկ մեղ համար շատ ցանկալի է հետաքննութիւն թէ սոյն տեղւոյս եւ թէ բոլոր սեռւ լերանց բաղմալի վանորէից, որք ժԱ. - ժԳ. դարուց հայոց ամէնէն սրբազան եւ դիտնականաց դա - դարքն էին, եւ որոյ վրայ այսօր թանձր վարադոյր մը քաշուած կը ծածկէ ո զիտէ որպիսի եկեղեցեաց եւ շինուածոց նշխարքները, որքան յիշատակաց արձանադրու - թիւն եւ հոգակաւ անմահանալի անձանց, մոռացեալ մահու քարեր» (Շնորհալի եւ պարագայ իւր):

Ալիշանի այս մարդարէաշունչ բառերը պիտի իրականանային երբ հետախուզի բահն ու բրիչը աշխատէր այս փոքրիկ դղեակին մէջ, լոյս աշխարհ բերելով Ապի - բատի եւ ուրիշ իշխան ու իշխանուհիներու

դերեզմանաքարերը, նոյնպէս Վկայասէր ու Բարսեղ հայրապետներուն սուրբ նըշխարքը:

Դղեկին արեւելեան պարիսպներուն վրայ երբ բարձրանաս, արդէն լիճերու ծովը - փուն ալիքներէն արեւու ճառագայթները աչքերդ կը շաղկեն, այս պարագայէն ներ - շնչուած Շնորհալին կը դրէ.

«Որ ի ծովին յայն (=Ծով-դղեակ) պատահաւ ի տեսարանն իւր ծովացեալ»

Բարդէն Վարդապետ այս տողերը մութ կը տեսնէ, բայց կը հարկադրուի խոստովանելու թէ «միշտ ծովին, այսինքն լճա - ցած կամ ծովացած ջուրին դադափուն է որ կը թելադրէ դայն».

Ինչպէս որ թելադրուած էր Շնորհալին կենսադիրը զրոյդը

«Վասն որոյ դէմ եղեալ կամէին իրեւ ընդ մէջ ծովական աւեաց ճանապարհ առնել եւ անցանել ընդ արեւելս»:

Փոքր դղեկէն շատ որոշ կերպով տեսա - նելի են լիճերը. դէթ ամենածայրի լիճը, որ հսդիւ երկու հազարամեղը հեռաւորու - թեան վրայ կը դտնուի:

Բարդէն Վարդապետ Ծովք եւ Ծով-դղեակի հետախուզական ճամբորդութեանը ատեն՝ եթէ յօժարած ըլլար Սօֆէն ու Տլուքէն դէպի հիւսիս դէթ հինգ ժամուան ճամբորդութեան տաժանքին, պիտի հասնէր լիճերու այս խումբին ափերուն, եւ պիտի հիանար անոնց իրական տեսքին դեղեցկութեանը, ի սպառ մերժելով բռնա - զրօսիկ այն ենթադրութիւնը թէ Սօֆ բը - լուրին հինգ մեղրնոց դադաթը կրնար ըլ - լալ Ծով-դղեակը, եւ բլուրին ստորոտը, ձմրան եղանակին, նեղ տարածութեան մը վրայ հաւաքուած ջուրերու տղմուտ աւա - դանն ալ «Ծովք»ը:

Գող Վասիլի մեռնելէն քանի մը տարի յետոյ, Գրիգոր Պահլաւունի, աննպատ եւ անապահով դտնելով Կարմիր վանքը, որ արդէն ֆոսնաքներու ձեռքը անցած էր, կ'անցնէր իր եղբոր Վասիլ իշխանին մօտ, Ծով-դղեակ հօրենական կալուածը, եւ հոն

կը հաստատէր կաթողիկոսարանը մինչեւ վերջնական փոխադրութիւն ի Հոռմկլայ, 1151ին: Որով Պահլաւունի կաթողիկոս եւ իր եղբայրը Ներսէս Շնորհալի անընդհատ ապրած: Կ'ըլլան Ծով-դղեակին մէջ երե - սունները երկար տարիներ: Հարիւր տա - րիներ հայ իշխաններու եւ կաթողիկոսնե - րու կայանը եղած այս դղեակը թէեւ փոքր ու ոչ-անառիկ, բայց եւ այնպէս բաւա - կան ընդարձակ էր տեղ տալու հարիւրա - ւոր անձերու առանձնակի սենեակներով, ունէր բաւարար ընդարձակութիւն մատու - ուի եւ չիրմներու համար, նոյնիսկ ընդար - ձակ դահլիճ իշխաններու եւ կաթողիկոս - ներու յատուկ ուր կրնային ժողով դու - մարել: Փոքր արշաւանքներուն, դղեակը կրնար դիմադրութիւն ցոյց տալ, իսկ պա - րենաւորման դիւրութիւններ ալ ունէր նը - կատի ունենալով բերդին շրջակայքի բերրի դաշտը: Բերդը շրջապատող անտառները, օժապտոյտ խոր ձորակները, մեծ դիւրու - թեամբ կրնային օգտագործուիլ բերդին մէջ պաշարման վտանգին տակ դտնուող - ներուն կողմէ եւ փախուստի ճամբայ դրո - նել դէպի Տաւրոսեան լեռները, ինչ որ տեղի ունեցաւ Մասուտ Սուլթանի 1149ի արշաւանքի տարին: Այս արշաւանքին վա - խէն էր որ Գրիգոր Պահլաւունին եւ Ներ - սէս Շնորհալին կ'անցնին Ծով-դղեակէն յայնկոյս Տորոսի, Թորոս իշխանին մօտ Ալլաւետ քաղ ամրոցը, մինչեւ որ Մասուտ, Ծովքը, Քեսունը եւ Թլղաշարը ասպատա - կելէ վերջ վերադարձաւ Իկոնիա: Այս ա - ւերիչ արշաւանքներէն երկու տարի յետոյ, թէեւ կաթողիկոսը կը վերադառնայ իր Ծով-դղեակը, բայց այլեւս անապահով Ծով-դղեակը, բայց այլեւս անապահով թողիկոսարանը կը փոխադրէ Հոռմկլայ, 1151ին(*):

Ծով-դղեակը այժմ կը կոչուի Քէօրօղ - լու Գալէսի: Ժողովրդային բանահիւսու -


(*) ՀՌՈՄԿԼԱՅ փոխադրեցին Աթոռ 1151ին, բոլոր դրան մարդերով եւ ազգականներով: (Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 228):

թեան մէջ Քէօրօղլուն նկատուած է կա - րաւաններ կողոպտող հերոս մը, բանուկ ճամբաներու վրայ բաժ-տուներ հաստա - տող ասպատակ մը: Ծով-դղեակը կը դրա - նուի ճամբաներու խաչաձեւման ու ճիւղա - ւորման կեդրոնական կէտի մը վրայ, ուր - կից կարաւաններ կ'անցնին Մալաթիա, Սամսատ, Պէսնի եւ փոխադարձաբար Մա - րաշ, Անտիօք ու Այնթապ: Ժողովուրդը ուրեմն այս բերդին տեղական ու բնական պարագաները նկատի առած, իր առաս - պիլը կը հիւսէ Քէօրօղլուի մասին եւ անոր կը յատկացնէ մեր պաշտելի Ծով-դղեակը, ի սպառ մոռացութեան մատնելով անոր զուտ հայկական անունը:

Ինչպէս նախապէս ալ ըսած ենք, Սըր - ուանձտեանց եւս զբաղած է Ծովքով եւ երկար տեսութիւններէ յետոյ եկած է այն եզրակացութեան թէ Ծովքը կը դտնուի խարբերդի մօտերը: Մենք արդէն պարզե - ցինք թէ Բարդէն Վարդապետ յենով Շը - նորհալի Սոփերքի յիշատակարանին եւ մահաւանդ Ալիշանի ցուցմունքներուն վը - րայ, շատ իրաւացիօրէն, պատմական ու տեղադրական փաստերով կը հերքէ Սըր - ուանձտեանցի այս առասպելը:

Սրուանձտեանց նոյնպէս «Թորոս Աղ - բար»-ի Ա. հատորին մէջ, տեղ մը կը դրէ. «Մարաշի մօտերը լիճ կամ ծովիկ չենք ու - նեցած եւ չունինք»: Ուրեմն եթէ Մարաշի մօտերը լիճեր ունեցած ըլլայինք, այն ա - տեն Սրուանձտեանց ինքը եւս ընդունած պիտի ըլլար թէ Կէօրճիւքը չէր կրնար «Ծովք»ը ըլլալ, այլ Մարաշի մօտ դտնը - ւող լիճերէն մէկը:

Մարաշի մօտերը մենք ունինք մէկէ ա - լելի լիճեր: Արեւելեան կողմը մեր յիշած իրական «Ծովք»-ի երեք լիճերը: Հարաւը ունինք դեղեցիկ լիճ մը «Պոռմաշը կէօլի» անունով որ Մարաշէն հազիւ ժամ մը հե - ուաւորութեան վրայ է: Պաղարճը դաշ - տին մէջ ընդարձակ լիճ մը «Պաղարճա կէօլի» անունով: Իսկ աւելի ընդարձակ լիճ մը նոյնպէս Մարաշի հարաւային կող -



մը որ փոքրիկ կղզեակ մըն ալ ունի իր մէջը, կը կոչուի «Կեալուր կէօլի»: Յիշուած այս վերջին լիճի մասին է որ Ալիշան առանց որոշապէս մատնանշելու տեղը կ'ենթադրէ որ «Տլքոյ դաւառին մէջ պէտք է ըլլայ լիճ մը «Կեալուր կէօլի» անունով, ինչպէս որ կը վկայեն օտար պատմաբանները»:

«Կեալուր կէօլ» Տլքոյ դաւառի արեւմտեան սահմանի ծայրամասին ճիշտ առջեւ տարածուած դաշտին մէջ կը գտնուի: Հիթիթներու «Ձէնճիլի» եւ «Աղճա կէօլի» յայտնի կեդրոններէն ոչ շատ հեռու: Ընդարձակ լիճ մըն է ան փոքրիկ ծիփուն կղզեակով մը: Այս լիճը զինուորական արշաւանքներու զիժէն հեռու, մեկուսացեալ տեղ մը ըլլալով «Ծովք»-ի կապակցութեամբ խնդրոյ առարկայ չի կրնար ըլլալ:

Մարաշի չրջակայքը գտնուող լիճերու այս թուարկումովը մենք պատասխանած եղանք Սրուանձտեանցի այն առարկութեան թէ «Մարաշու քովերը լիճ կամ ծովիկ չենք ունեցած եւ չունինք»:

Մարաշի չրջանին մէջ գտնուող երեք լիճերու խումբը անկասկած որ «Ծովք»ն է եւ անոր մօտի փոքրիկ բերդն ալ Ծով-դըղեակը, այս մասին ոչ մէկ կասկած: Լիճերու աշխարհագրական դիրքը, վայրին հայկական կեդրոն ըլլալը, Գող Վասիլի երկրին մէջ գտնուիլը, ռազմական բանուկ ճամբաներու մէջ տեղ բռնելը, լիճերուն Տլքոյ դաւառին պատկանիլը, վերջապէս Գող Վասիլի մեռնելէն յետոյ այդ հողամասին յաջորդաբար Խաչակիր բրինձներու (իշխաններու), ձուլիւններու եւ Մարաշի բրինձ Պոլտինի երկիր կոչուիլը եւ մինչեւ հիմա ալ այդ տեղերուն Պաղտըն կոչուիլը, անթիտելի ապացոյցներ են որ յիշեալ երեք լիճերը «Ծովք»ն են եղած:

Ծովքը ու Ծով-դըղեակը արաբական արշաւանքներու ալ ենթարկուած է եւ նոյնիսկ անոնց տիրապետութեանը տակ մնացած է

տարիներով: Հոս կարելի է ամփոփել արաբ պատմագիրներու վկայութիւնները Ծովքի եւ չրջականերու մասին, որոնք Վահան Քիւրքճեանի կողմէ Journal of Royal Asiatic Society Յունուար 1895 թիւէն արտագրուած եւ Բարդէն վարդապետի զրքոյկին (էջ 111-113) մէջ ամփոփուած են: Ահա այդ վկայութիւնները:

Էլ Հատաթ (— Ծովքի չրջան) իսլամներէ նուաճուեցաւ Օմարի իշխանութեան ատեն, Պիլադուրի (Biladhuri) կ'ըսէ թէ անունն ի սկզբան էր «Տարալ էլ Հատաթ (Հատաս) էս Սէլամէ», այսինքն ապահովութեան լուրերու ճանապարհ: Յետ ժամանակաց, անունս համառօտեցաւ եւ եղաւ էլ Հատաթ (լուրեր)՝ քաղաքը շինուեցաւ էլ Մէհտի ամիրայէն, յետոյ ալ էլ Ռէշիտէն: Իսթախրի կը յիշէ անոր հերկելի դաշտերը եւ ընտիր պտղածառերը եւ կը պատմէ թէ ինչպէս այս սահմանադրուած ամրոցը Յունաց եւ Իսլամաց կողմէ զրաւուեցաւ քանի մը անգամներ փոխն ի փոխ:

Եագուք, կը խօսի քաղաքին եւ անոր ամուր բերդին վրայ եւ անոնց դիրքը կը ցուցնէ Մալաթիոյ, Սամսատի եւ Մարաշի մէջտեղ: Կ'անուանուէր էլ Համրա, Կարմիր, եւ բերդը կը գտնուէր էլ իւր Հայտապ բլուրին դադաթը:

Տը Մաշֆի կ'ըսէ թէ էլ Հատաթ էլ Մահտիի ձեռքով նորոգուելէ ետքը կոչուեցաւ էլ Մուհամմէտիյէ, խալիֆայի անունով, եւ հայոց կողմէ կ'անուանուէր (Kaytuk) — Քայթուկ:

Ապիլփիտա կ'ըսէ թէ այս բերդը 12 մըղոն հեռու է ձէյհան գետի մէկ կէտէն:

Իպն Խուրտաապի կը գրէ որ էլ Հատաթի եւ Մարաշի մէջտեղ 30 մղոնի հեռաւորութիւն կար:

Գալով էլ Հատաթի գետերուն Իպն Սեբաթիոն որոշապէս գրած է Նէհր ի ձուրիթ անունը. կը շարունակէ ըսել թէ ձուրիթ գետը կը հոսի Հատաթի լճէն, Մարաշի մօտ, յառաջ ընթանալով վերջապէս կը թափի ձէյհան գետը:

Նոտը դրերով վահան Բիւրքնեան իր կողմէ կ'աւելցնէ : Քայթուք (Kaytuk) անունը բառի սխալ ընթերցում մըն է . ճիշտ անունը կը լինի Քայնակ կամ լաւագոյն եւս Քենուկ, ինչ որ կը պատահինք Սիսուանի մէջ: Եզրագրողը Պիպուրս Պըն-տագտարի մինչեւ Կեսարիա արշաւը կատարուեցաւ 1274ին այս ճամբով — Այն-Քապէն Տըւք, յետոյ Մէրճ էլ զիպաճ, յետոյ Քենուկ, յետոյ Կէօքսու եւ անկէ Տէրպէնտ եւ այլն:

Ինչպէս կը տեսնենք Արար պատմագիրներու վերի վիպակներէն, Հատաթ ու «Ծովք» իրարու մօտ կը գտնուին, եւ թէ Արարները «Ծովք»ը կ'անուանէին Հատաթի լիւծ: Ծուրիթ գետը կը հոսի Հատաթի լիւծէն եւ Մարաշի մօտէն յառաջ ընթանալով ի վերջոյ կը թափի ձէյհուն գետը: Այնթապի մօտէն հոսող գետերը կը թափին Եփրատ, ինչպէս Սաճուրը, եւ կամ կը յառաջանան մինչեւ Հալէպ: Զիհուն գետին հետ եւ ոչ մէկ առնչութիւն ունին: Ուրեմն սխալ է Բարդէն վարդապետին այն պնդումը թէ Հատաթ Այնթապն է:

Ծուրիթ գետը մեր հիմադրուան Ազոու գետն է որ ձէրիտ գիւղին առջեւէն կ'անցնի, կը յառաջանայ դէպի արեւմուտք եւ Մարաշի մօտէն անցնելով կը թափի Զիհուն գետը:

Մենք արդէն ըսած էինք թէ երեք լիւծերու (Ծովքի) հոսող ջուրերը Ծով-դը-դէկին մօտերը կը թափին Ազոու (Ծուրիտ) գետը, եւ դղեկին հիւսիս ու արեւմտեան եզերքը քերելով կը հոսին մինչեւ Մարաշ: Գալով Հատաթի, ինչպէս կը տեսնուի, այս փոքրիկ քաղաքը իսլամներէ նուաճուելէ յետոյ միայն Հատաթ կոչուիլ սկսած է Օմար Խալիֆայի ատեն, մինչ ատկից առաջ կը կոչուէր «Հայոց կողմէ» Քայթուք կամ Քենուկ, ինչպէս կը գրէ Տըմաշքին:

Հատաթ «Ծովք»ի վրայ տիրապետող զիւրքի մը մէջ, Տաւրոսի սարալանջին վրայ շինուած քաղաք մըն է, որ հիմա կը

կոչուի իր հին անունովը «Կէօյիլք» կամ Մարաշ: Հոս քիւրտ պէկը ունի իր փառաւոր ազարանքը, շինուած խոշոր սրբատաշ քարերով, փլատակներէ վերցուած. տեղ տեղ մողայիքներ առատապէս կը գտնուին. հին ջուրի ճամբաներ լայն ու խորունկ կ'երկարին փլատակուած քաղաքին գերթէ բոլոր մասերուն մէջ: Զուրը, քաղաքէն երկու ժամ հեռաւորութեան վրայ Գանլը տաղը կ'իրճերուն մէջէն ծուրիտ (Ազոու) գետէն առնուած է եւ ժայռերը փորելով ահազին աշխատանքով բերուած է Հատաթ կամ Կէօյիլք քաղաքը: Կէօյիլքէն կը տեսնուին երեք լիւծերու ընդհանուր տեսարանը (Panorama): Ծով-դղեակը Հատաթէն հաղիւ մէկ ժամուան հեռաւորութեան վրայ կը գտնուի դէպի հարաւ արեւելք:

Հատաթի արեւմուտքէն Տաւրոսի կողքին շինուած է խոշոր քարերով առանց սիւների պատ մը, որ առնուազն 8-10 հազարամեղր երկարութիւն ունի: (Տես քարտէսը): Այս պատը ամենայն հաւանականութեամբ Արարներու կողմէ շինուած է, հիւսիսէն դալիք Բիւզանդական յարձակումներու դէմ պաշտպանուելու համար: Արդէն Եփրատացուց երկիրը արշաւելու համար Բիւզանդացիները ունէին երկու ճամբայ. առնցմէ առաջինն էր Կոկիսոնէն Մարաշ ու անկից ալ Ծովք ու Սամսաթ: Իսկ երկրորդն էր Ալպիսթանէն Փարանիայ, յետոյ Հատաթի Տէրպէնտէն-կիրճէն — Ծովք ու Սամսաթ: Ինչպէս տեսանք, Պիպուրս Պնտագտարի Կեսարիա արշաւանքը կատարուեցաւ Այնթապէն Տըւք, յետոյ Մէրճ էլ տիպաճ, յետոյ Կէօյիլք, յետոյ Կէօքսու եւ անկէ Տէրպէնտ անցնելով Կեսարիա:

Վերոյիշեալ Կէօքսու գետակը Ծովքի մօտէն անցնելով կը թեքի դէպի արեւելք, թափելու համար Եփրատ գետը: Կէօքսու գետակը զուգահեռ դժով մը ծուրիտ գետին հետ, Տաւրոսէն կ'իջնէ Ծովքի դաշտադէտինը, ուսկից Կէօքսուն արեւելք կը


հոսի, իսկ ծուրիտը (Ազոու գետակ) արեւմուտք: Առաջինը Եփրատի, իսկ երկրորդը Զիհունի մէջ կը թափին:

Հատաթը Մարաշէն 35-40 մղոն հեռաւորութեան մէջ կը գտնուի. իսկ խուր-տատալին ենթադրութիւնը շիտակ է, երբ կ'ըսէ «էլ Հատաթի եւ Մարաշի մէջտեղ 30 մղոնի հեռաւորութիւն կար»: Այս հեռաւորութիւնը լեռնային ճամբով ճիշտ կ'ընայ ըլլալ. իսկ դաշտային ճամբով, հեռաւորութիւնը աւելի կ'երկարի, երբ Հատաթէն Ծով-դղեակ, յետոյ ծուրիտ գետը անցնելով ճամբաները զիւ-դակ դժով կ'ըտրել հարկ ըլլայ:

Այս գրութեան մէջ յիշուած պատմական վայրերուն մէջ անձամբ գտնուած եմ. Ծովքի եզերքը, առողջապահական պաշտօնով ամիս մը շրջած եւ այցելած եմ բոլոր շրջակայքը: Էլ Հատաթ հին քաղաքի փլատակները անձամբ պտըտած եմ, քիւրտ պէկին հիւանդութեանը պատճառով ութ օր հոն մնալ ստիպուած ըլլալով. իսկ Մարաշի հարաւը գտնուող Կեալուր կէօլի, Զէնճիրլի եւ Սաքճա Կէօլիւն, Եւրոպացի հնագէտներու պեղումներուն ժամանակ այցելած եմ: Այնպէս որ իմ ակնհաստեսի վիպակներէն միացուած պատմական տուեալներու, առիթ տուած են սոյն տեղադրական պատմական գրութեան:

Հալէպ

ՏՈՒԹ. Յ. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ



ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՌՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ

(Correspondances)

Տաճար մ'է բընութիւնն, ուր սիւներ կենդանի
Լըսելի կ'ընեն մերք անորոշ բարբառներ,
Ու մարդը ման կու գայ խորհուրդի անտուններ՝
Որո՞նք զինք կը զընեն ակնարկով ընտանի:

Հեռակայ շրջաբնող գերբ երկա՛ր արձագանգ,
Մըքագին ու խորունկ միութեան մը մէջէն,
Անսահման գիշերին ու լոյսին հանգունակ,
Բուրում, գոյն եւ հնչիւն իրարու կը ձայնեն...:

Կան բոյքեր որ քարմ են միսերու պէս մանկան,
Սրինգներու պէս անոյշ, մարգերու պէս դալար,
Ուրիշներ ախտաւոր, հարուստ ու յաղքական

Որ ունին ծաւալումն իրերուն անվախման,
Ինչպէս մուշկն ու կնդրուկ, խունկի բոյրն ու
յամպար,

Որ սլացումը կ'երգեն մտքին եւ ըզգացման...:

Charles Baudelaire

Թրգմ. Մ. ԱԹՄԱՃԵԱՆ

EPITAPHE

Au terme de mes jours, j'entrevois mon tombeau
Perdu dans les sentiers étroits d'un cimetière.
Miséricordieux Père, exaucez ma prière:
Accordez, à mon corps, à mon âme, le repos.

A mon éternelle couche, au son du morné glas,
Je serai conduit, vers la pacifique demeure,
Dans un monde inconnu à l'atmosphère meilleure.

Le naufragé cherche un port et moi le trépas!

Que rien ne vienne troubler mes cendres, pas
une fleur.

Que personne ne répande en vain une larme
amère.

Si lugubre qu' Elle soit, la Mort me sera chère
Si l'on dira de moi: "Ci-gît un noble cœur".

Léon Capamadjian

Ծանոթ. Խմբ. — Ֆրանս ձեռնարանի Մշտնջե-
նաւոր Քարտուղար՝ Georges Lecomte, առանձին
համակով մը (15-12-47) քաջալերած է այս բա-
նաստեղծութեան հեղինակը՝ Պր. Լեւոն Գարամա-
ճեան, որ նախկին սան է մեր Բերայի (Պոլիս)
Միթթարեան Վարժարանին: